



Միսաք Մեծարեւնց

Անձրեւ

Համբոյրն անձրեւին կը թրջէ շափշափ
Վարդէ գիծն անտես բերանի մը շուրջ.
Օ՛հ, աս ի՛նչ գրգանք, օ՛հ, աս ի՛նչ անուրջ,
Որ կը տամկանայ, գաղտ ու հապըշտապ,
Իմ ծարաւահիծ, իմ որբեւայրի
Իրիկուններու շուշանին վրայ լուրջ:
Անձրեւոտ գիշեր, գրթա՛ծ քահանայ,
Թօթուէ՛ սրբենի այդ տեղատարափ,
Ձերթ մասունքի ջուր, մինչեւ որ լենայ,
Մինչեւ որ լենա՛յ բաժակն այս պարապ
Իմ երագներուս՝ որ ոսկեմըրափ
Կեցեր է ցրտոտ մարմարին վըրայ:
Օ՛հ, աս ի՛նչ գրգանք, օ՛հ, աս ի՛նչ անուրջ
Կու տաս դուն ինձի, անձրեւո՛տ գիշեր,
Դո՛ւն, բարեբարի, գրթա՛ծ քահանայ,
Որ հին Լլկանքին ժողվեցիր փուշեր,
Եւ հնչեցուցիր բարբառդ՝ ոսկի՛ մուրճ՝
Որ մտքիս նոր նոր դուռեր կը բանայ....